



ՎԱՐԻՉ-ԻՄԲԱԳԻՐ Մ. ՊԱՊՕՆԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 11

— Շ Շ Ա Ր Ա Ր —

11 ՄԱՐՏ 1906

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱԻԱՌԱՅ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍՈՂՄԱՆԻ
Տարեկան 50 ՂԲԸ	Տարեկան 54 ՂԲԸ	Տարեկան 42 ՖԲ.
Վեցամսեայ 25 ,	Վեցամսեայ 27 ,	Վեցամսեայ 6 ,

ԳԱՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱԺԱՌԱՏՈՐՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՑՈՅՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, Ճեղաղ Պեյ խանին տակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուղադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեկուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին :

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարութիւն ինքապէս նաեւ ԶԵՆԻԹԸ՝ քե՛ Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գումացոյցից պայմաններով :

Ծանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարեգի 1900 Արուեստահանդէսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են :

Հատը 40 փաթա

ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(آ. آصاوریان) شرکت صتییه مطبعیه — باب عالی جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի ճառասէսի քիւ 52

Կիսգոր Աերկայացուցիչ
Գ. ՃԷՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵԱԲԱԹԱԹԵՐԹ

ՎԱՐԻՉ-ԽՄԲԱԳԻՐ Մ. ՊԱՊՕՆԵԱՆ

Ժ. ՏԱՐԻ ԹԻԻ 11

ԵԱԲԱԹ

11 ՄԱՐՏ 1906

ՈՒՍՈՂԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՄԷՋ

Կ'ըսուի որ Ուսումն. Խորհուրդը երկու կարծիքի բաժնուած է այս միջոցիս, սա՛ կէտին վրայ թէ Կրթական Մրադրին բարեփոխութեան հետեւա. նօք աւելցուած երկու դասարաններուն համար հա՛րկ է ունենալ և պահել ուսողական և գիտական ճիւղերը, ի՛նչ կերպով որ կը պահանջուին անոնք երկրորդական վարժարանի մը երրորդ դասարանէն սկսեալ:

Այս հարցումը չափէն աւելի կը զբաղեցնէ մեր Ուսումն. Խորհուրդին անդամները: Միթէ կարելի՞ էր ենթադրել թէ երկու տարիի յաւելուածական դասարաններուն գոյութեան չատագոյնները մի եւնոյն ատեն չատագով չըլլային նաեւ նոյն ճիւղերուն դասաւանդութեան: Բնականաբար պէտք է աւանդուին անոնք, քանի որ դասա-

րանները կ'աւելնան, ո՛չ թէ միայն այն պատճառաւ որ թաղային վարժարանի չըջանաւարտներէն ոմանք կրնան երկրորդական վարժարան մը երթալ, այլ նաեւ ուսումը՝ ուսման համար. երբ լեզուներու ճիւղը երկու տարիին համեմատութեամբ պիտի զարգանայ, ինչո՞ւ նո՛յն համեմատութեամբ ալ ոյժ չտրուի ուսողական և գիտական ճիւղերուն, աշակերտներուն մտաւոր զարգացման տեսակէտով: Ի՛նչ օգուտ ունի դասարաններու յաւելումը, եթէ մեր աշակերտը պիտի չ'օգտուի անոնցմէ, երկրորդական վարժարան մը յաճախելու պարագային, և կամ գործի ասպարէզը մտնելու պարագային: Քանի որ երկու տարի աւելի վերջը պիտի հանենք աշակերտը մեր թաղային դըպրոցէն, ինչո՞ւ երկրորդականին համար

չահ մը չունենայ, և այս վերջինին մէջ փոխանակ նախապատրաստականէն ըսկըսելու ինչո՞ւ չսկսի ուղղակի ուսումնարանի բաժինէն :

Շատ խորհեցանք առանձինն և չը կրցանք բանաւոր եզրակացութեան մը յանգիլ այն նպատակին վրայ՝ զոր Ուսումն. Խորհուրդին տարակարծիք անդամները կրնան ունենալ յայտնի կամ թաքնաբար : Ոմանք կ'ըսեն թէ Կեդր. Վարժարանին դիրքը նկատի կ'առնեն Ուսումն. Խորհուրդին տարակարծիք անդամները՝ ա'յն մօտ թէ ուսողական և գիտական ճիւղերը պակաս աւանդելով երկու տարիի դասարաններուն մէջ, թաղային դպրոցի աշակերտները, դարձեալ ըստ առաջնոյն, երբ Կեդրոնական երթան, ըսկըսին նախապատրաստական կարգերէն : Արդարեւ, տարօրինակ նպատակ, — եթէ իրօք ա'յս է ներքին պատճառը Ուսումն. Խորհուրդին անդամոց ոմանց ընդդիմութեան :

Բայց չենք կրնար հաւատալ, որովհետեւ ողջմտութեան ամենափոքրը նշոյլ մը իսկ չենք կրնար նշմարել այդ գատողութեան մէջ : Ինչո՞ւ, զոր օրինակ, պնդեւ թէ, որպէս զի Կեդրոնականին դիրքը բարձր բռնուի միշտ, յաւելուածական թաղային երկամեայ չըջանին մէջ ուսողական և գիտական ճիւղերը համեմատական զարգացումը և բարձրացումը չունենան, որովհետեւ վերջապէս յայտնի է, երկրորդական վարժարաններուն մէջ, ինչպէս և Կեդրոնականին մէջ, ուսումնարանի ընթացքին յարմարագոյն կը համարուին միայն ա'յն աշակերտները, որոնք կըրնան ուսողական և գիտական ճիւղերուն մէջ պահանջուած քննութիւնը անցընել : Ի՞նչ կ'ըլլայ ուրեմն երկու դա-

սարաններուն արդիւնքը : Ըսել է որ Ուսումն. Խորհուրդը կը մտածէ որ թաղային վարժարանները կանխաւ իրենք իրենց համար են միայն, և անոնց ծրագրին պատրաստութեան մէջ բարձրագոյն (կամ երկրորդական) ուսմանց խնդիրը երբեք նկատողութեան առնուելու չէ, և հետեւաբար երկրորդական վարժարաններու աշակերտները ուղղակի անոնց մէջ միայն պէտք է բոլորեն իրենց թաղային կըրթական չըջանն ալ : Բայց, եթէ ա'յս է բուն նպատակը, կարելի՞ է իրականացնել զայն : Քանի՞ Կեդրոնական վարժարան ունինք որ լրացնեն միեւնոյն ատեն իրենց ուսումնարանին ապագայ աշակերտներուն տարրական պէտքերը : Միթէ կանխաւ որոշուած է թիւը ա'յն աշակերտներուն՝ որոնք պիտի յաճախեն Կեդրոնական, չէ՞ մի որ թաղային չըջանաւարտներէն կը գոյանան անոնք մեծ մասամբ, և քանի որ երկու տարին 'աւելնայ թաղային վարժարաններուն ուսմանց ծրագրին վրայ, պէտք չէ՞ որ Կեդրոնականին նախապատրաստական մասը զանց առնուի թաղային չըջանաւարտներուն համար : Բայց ասիկա ինչպէ՞ս կ'ըլլայ. — անշուշտ ոյժ տալով գիտական և ուսողական ճիւղերուն :

Ասիկա ա'յնքան տրամաբանական է որ ասկէց աւելի կարճ բառերու պէտք չկայ հասկցնելու համար թէ ի՞նչ բաներու շուրջ վիճաբանութիւն կը յարուցանենք, և ի՞նչ հաշուական նպատակի կը հետեւինք զուտ կրթութեան և դաստիարակութեան անբիծ և անաղարտ խորհրդակցութեանց մէջ :

S.

Տէր Խմբագիր,

Յօդուածս չի կրցայ զրկել, այս միջոցիս վեցամսեայ քննութիւններով զբաղած ըլլալու համար: Քիչ օրէն, Զատկական արձակուրդ պիտի ունենամ, որու միջոցին միտքս դրած եմ Սկիւտար անցնիլ ու Ձեզ ալ այցելել:

Այս առթիւ Ձեզ պիտի ներկայացնեմ Յօդորդ Մարի Պալապանեանը, որ երկու ամիսէ ի վեր իմ պաշտօնավարած վարժարանիս մէջ գծագրութեան ուսուցչուհի կարգուած է: Օրիորդ Պալապանեանի հետ սըրտակից բարեկամուհի եղանք. չատ սրամիտ օրիորդ մըն է ան: Յօդուած մըն ալ յանձնեց ինձ, զոր ներփակ կը զրկեմ Ձեզ, իմ յօդուածիս տեղ հրատարակելու համար: Յունամ թէ չէք մերժեր: Օրիորդը խոստացաւ ուրիշ առթիւ ալ գրել Հանրագիտակի մէջ:

Յարգանք

ԵԼԻՁ ՀԱՃԵԱՆ

ԳՈՆԳՈՐՏԻԱՅԻ

ՅԻՇԱՍԱԿԻՆ

Եւ Գոնգորտիայի բաւրոնը
որոշուեցաւ փյցնել, ճեղր
Սենք Անթուան կանգնելու
համար: (Մանգոսմէ)

Ինչ կրնանք ըսել, երբ յանկարծ օր մը, կը լսենք թէ Գոնգորտիան, սիրոյ, հեշտութեան եւ զուարճութեան չաստուածներուն անունին նուիրուած այդ բազինը, այդ տաճարը, յանկարծ կը մտադրուի Աստուծոյ անունին նուիրել եւ մէկուն տեղ ուրիշ բազին մը կանգնել, բազին մը որ սակայն այս անգամ սիրոյ, բարութեան եւ գիտութեան Աստուծոյն ի պատիւ պիտի կանգնի:

Ամէն պարագայի մէջ բազինը միշտ բազին է, պաշտամունքի եւ զոհարեցումեան ձեւերը պիտի փոխուին միայն:

Տաճար բարձրելոյն պիտի ըլլայ, փոխանակ ջնջուած տաճարի:

Երբ դեռ քանի մը չարաթներ առաջ հոն կը դիմէր monde մը ամբողջ հաճոյասէրներու, երբ դեռ կազի կտուցներու լուսաշող ճառագայթաբծակումին տակ բարիքեան երգ-

չուհիներ իրենց ամբողջ հրապոյրը կը ցուցադրէին, երբ սիրոյ փառաբանութիւնը կօրհներգէին եւ սիրոյ մեղեդիներուն էն համոզները կերգուէին, որո՞ւ մտքէն կրնար անցնիլ թէ օր մը եւ հեռու չէ այդ օրը, այդ մի եւ նոյն գետինն վրայ պիտի կառուցուի Սրբոյն Անտոնի տաճարը, ուր այս անգամ պիտի դիմէ monde մը բարեպաշտիկ մայրերու, մխիթարութեան կարօտ այրիներու, հազիւ կէս մը լուսաւորուած միջին կամարներուն տակ, մարդիկ ճոխութիւն ու շիջութիւն չէ որ պիտի պարզեն, այլ իրենց սրտերը պիտի բանան Աստուծոյ եւ իրենց գաղտնիքները պիտի պարզեն անոր, երկրային սիրոյ փառաբանութեան տեղ, երկնային սէրը պիտի օրհներգուի եւ սիրոյ մեղեդիներու տեղ, որոնք երգչուհիներու բերնին մէջ միայն այնչափ համով կը դառնայ, պիտի երգուին հոգեցունց կրօնական մեղեդիներ, հրեշտականման մանուկներու կողմէ:

Գոնգորտիայի դուռնէն ներս մտնողը բողբոջի տարբեր աշխարհքի մը մէջ կը զգար ինքզինքը, կ'ըսէր անցեալ օր, բարեկամներէս մին . . . արտասուելով: Ուրիշ բարեկամ մը սակայն, փոխանակ լալու քառեակ մը շինելով նուիրած էր Գոնգորտիայի յիշատակին: Ահաւասիկ այդ քառեակը:

Է՛հ մընաս բաւրով ո՛վ Գոնգորտիայի դուռ

Որ շողշողայիր voila du tout

Հեւք սայիր արսիս, դրամ գրպանիս

Հեշտութիւն մարմնիս՝ mais toujours prix fixe

Ու այսպէս Գոնգորտիայի անունը պիտի աւրուի իր այսչափ տարուան հնամենի չէնքին ճակտէն եւ փոխադարձաբար պիտի քանդակուի, այդ թատրոնին յաւիտենական յաճախորդներուն, Նանիին, Լիզին, Աննի-քային, Մառիքային, Վիքթորիային . . . սըրտերուն մէջ:

Բայց, պիտի հարցնէք ինձի, « Դո՛ւք ո՛վ փափկասուն եւ շնորհափայլ ու համեստափայլ օրիորդ, դո՛ւք որ կը խօսիք Գոնգորտիայի պէս թատրոնի մը ու անոր հաճախորդներուն ու ուհիներուն վրայ, ամօ՞թ թի կարմիր մը չպատե՞ց ձեր դէմքը, դո՛ւք որ վերջապէս հանրութեան բարոյական քարոզելու կելլաք, ո՛հ սիրելի օրիորդ, ամէն բան ընէ՛ք, բայց կեղծաւորութիւն, երբե՛ք »:

Պատասխան չունի՞մ կը կարծէք, ձեր այդ առարկութեան: Ընդհակառակը, պիտի ըսեմ թէ, «կեղծաւորները անոնք են, որոնք Սրբութիւն Սրբութեանց ի վրայ կը ճառեն, համրիչ կը քաշեն, մեծ պահքին եօթը շաբաթները ծոմ կը բռնեն, միջինի վրայ կոխելէ կզգուշանան, ամուսնական խնդիրներու վրայ վերապահութեամբ կը խօսին, զԱստուած կը փառաբանեն, Արեւազարին ներկայ կը գտնուին, կնոջ մը շըրջազգեստին դպչիլը Աւետարանին եօթը մահացու մեղքերէն մին կը նկատեն, ճամբան քայլած ատեննին «Հայր մեր» մը կամ «փառք քեզ Աստուած» կը մոլլտան, եւ սակայն ասոնք, այս երանելի դասը կեղծաւորներուն, ամէն բան կ'ընէ, քեզմէ ինձմէ եւ միւսէն ա'լ աւելի լրբութեամբ, միայն թէ դո՛ւն սամանին վրայէն եւ ան ... սամանին տակէն կը գործէ»:

Տարբերութիւնը այնչափ մեծ է որուն վրայ խորհրդածել ձեզի կը թողում. վստահ ըլլալով մի եւ նոյն ատեն թէ, երբ եզրակացութեան հասնիք, զիս անբարոյական աղջիկ մը չպիտի նկատէք, վերջապէս ես ալ ամուսնանալիք աղջիկ մըն եմ:

ՍԱՐԻ ՊԱՆԱՊԱՆԵԱՆ

Չ'ՍՏՈՐԱԳՐՈՒԱԾ ՓՈԽԻՐԸ

Հանրագիտակի Պատ. Խմբագրութիւնը ազնուաբար բեփշտակ ընելու բարեհաճութիւնըն ունեցեր էր վերջերս:

Թաղի մը մէջ մէկը կը մեռնի. Թաղականները կ'ուզեն կանխիկ գանձել ծախքերը, մեռելին տէրուըտանքը չ'են կրնար ճարել պահանջուած գումարը, եւ յուզարկաւորութիւնը չի կատարուիր մինչեւ որ երաշխաւոր մը չ'առնուիր իրենցմէ:

Հանրագիտակ կ'ուզէ որ այդ իրողութեան վրայ «աղուոր յօդուած» մը գրեմ: Բայց խնդիրը մօտէն չ'եմ գիտեր: Այսու հանդերձ առիթը յարմար կը նկատեմ պատմելու համար նմանօրինակ ուրիշ իրողութիւն մը՝ որ մազի չափ իսկ չի տարբերիր կարծեմ նոյն Թաղին մէջ տեղի ունեցածէն, եւ որով պիտի

տի կրնամ լի ու լի գոհացում տուած ըլլալ Հանրագիտակի խնդրանքին:

Մարդուն մէկը կը հիւանդանայ: Ոտքէն պաղ առեր է կ'ըսեն: Բժշկական օրինաց համաձայն պաղ առները յանցանք կը նկատուի, իսկ ոտքէն պաղ առները՝ ամենամեծ եւ յաճախ աններելի յանցանք: Ուստի բժիշկները՝ կեանքի մէջ անոր ներկայութիւնը պատշաճ չեն նկատեր, ու առանց բան մը յայտնի ընելու ճամբորդութեան անցագիրը կը պատրաստեն ու կը վաւերացնեն:

Կ'անցնի քիչ մը ատեն, ու տակաւ մարդըն ալ կը համոզուի թէ՝ ա'լ օրերը համուած են, ուստի կը կանչէ իր սիրելիները, եւ սովորական մահամեքններուն պէս վերջին մնաք բարովը ըսելէ ետքը, կը խնդրէ իրենցմէ որ զինքը անշուք կերպով չի վերցընեն: Բայց մօտէն դիտնալով անոնց նիւթական անձուկ վիճակը, կը կասկածի թէ մի՞ գուցէ անոնք եղածին կապեն. կը վարանի պահ մը, ու կը խորհի ժամանակի մը համար յետաձգել անդենականը ընելիք իր այս առաջին ճամբորդութիւնը:

Խեղճը չ'էր գիտեր սակայն թէ անցագիրը ստորագրուելէն ետքը՝ անդին ընդունելութեան ամէն պատրաստութիւն տեսնուեր է, ու երբ վարանումին լուրը հոն կը հասնի, իսկոյն «կեանքի հաւաքիչ»ը կը զրկեն, որ կ'ընէ չընէր տունէն աննշմարելի կերպով ներս կը սպրդի, եւ անկիւնէ մը իր շուշանի պէս սպիտակ դէմքը ցոյց տալով, անոյ՛ջ ժպիտով մը կ'ըսէ իրեն թէ պէտք է այլ եւս ճամբայ ելլել:

Խեղճ մարդը, երբ այդ լուսաշող դէմքը կը տեսնէ, նախ՝ իւղը հատած կանթեղի մը վերջին պլլուքին պէս ժպիտ մը կը պլլայ իր Թմթռկած այտերուն վրայ, բայց երբ կ'զգայ թէ «կեանքի հաւաքիչ»ն է ան, գոյնը կը նետէ, ակռաները կ'սկսին կափկափիլ, ու դողէն մարեղիք կուգայ վրան:

Կեանքի հաւաքիչը պահ մը աներեւոյթ կ'ըլլայ:

Շատ չ'անցնիր, խեղճը գլուխը կուգայ մարդուն, ու կը խնդրէ որ եկեղեցիէն պաշտօնեայ մը կանչեն իրեն:

Խնդրանքը կը կատարուի, եւ ահա պատուարժան Թաղական մը իր դէմը կը տեսնէ:

Ե՛ս, կ'ըսէ ան'ն, ձայնով մը՝ որուն մէջ ա՛լ իր վճռական ճամբորդութեան համակերպելու տխուր շնչոր կար, ես կ'զգամ թէ պիտի ճամբորդեմ այս օրերս դէպի անդենա՝ փանը, բայց պայմաններ ունիմ ձեզ առաջարկելիք: Նախ սրբավայրի մը մէջ պէտք է գիշերեմ որպէս զի քիչ մը հանգստանամ: Ամէնէն ծանր ծածկոցը կուգեմ վրաս: պէտք է նաեւ փողոցներու մէջ պտտցնեն, ետքէն ութը տասը հատ սեւազգեստ խալիւզ պիտի առնեմ հետս որպէս զի ճամբան չի կորսնցնեմ:

Թաղականը հետաքրքրութեամբ մտիկ կ'ընէր ըսածները:

Եւ որովհետեւ, կ'աւելցնէ նորէն, ոչ ես դրամ ունիմ, եւ ոչ ալ իմիներս, կը խոստանամ տեղս հասնելուս պէս ծախքերը ամբողջ հոնկէ զրկել ձեզ:

Ոչոր չունչ մը կ'առնէ Թաղականը այս խօսքին վրայ: Պայմանը կ'ընդունուի եւ սա՝ կայն երաշխաւոր մը կը պահանջուի:

Ասոր վրայ՝ մարդը Թաղականին առաջարկութեանը համաձայն փոխգիր մը կը քաշէ կառապան Մարտիրոս անուն մէկու մը վրայ, որ շատոնց ի վեր դադրած էր այս աշխարհիս վրայ գոյութիւն ունենալէ, Թաղականը առաւելութիւն մը կը նկատէ այդպէս ըլլալը, խորհելով որ եթէ նոյն իսկ այս աշխարհիս մէջ չի կրնայ գանձել այդ փոխգիրը, անդին պիտի կրնայ գանձել զայդ:

Փոխգիրը խմբագրելէ ետքը երբ կարգը կուգայ իր ստորագրութիւնը դնելու, դեռ գրիչը չի շարժած, «կեանքի հաւաքիչ»ը վերստին կը տմայէ սենեակին անկիւնը, եւ այս անգամ՝ ոչ միացած ըլլալուն պատճառաւ անանկ ահարկու նայուածք մը կը նետէ վրան որ մարդուն ձեռքը ոտքը սառ կը կտրին, չրթունքները կը կծկուին, աչքերը կը մթագնին, դէմքը դեղնած մեղրամոմի գոյն մը կ'ստանայ եւ — դեռ ինչ գիտնամ կարգ մը անանկ հոգեկան վիճակներ՝ որոնց թուումը լուսահոգի նարեկացին հրաշալի կերպով է ըրած — բացարձակ անշարժութեան մը մէջ գետինը փռուած տարտամ ու անորոշ նայուածքով մը անկիւնը կը նայի:

Տնեցիները կ'սկսին լալ պռռալ, Թաղա՝ կանը՝ պոթկացող այդ աղմուկէն չփոթած,

կը վախնայ, ու բարկութենէն կրակ կտրած չունչը եկեղեցին կ'առնէ, կարծելով որ եղածները խմբով խաղ մըն էին իրեն:

Նոյն օրը իրիկուան դէմ ճամբորդը եկեղեցի կ'առաջնորդեն, Թաղականը՝ գիշերանց՝ լուսարարը եւ երկու ժամկոչ հետը առած, հազարով ու ոտքերը գետինը քրտկողութեամբ պահարան կը մտնէ որպէս զի եթէ երբէք քնացած ալ է, արթննայ, ու քովը երթալով մատովը զայն մէկ երկուք հրմշտկելէն ետքը կ'ըսէ իրեն՝ «ինձի նայէ, ես անանկ տիւպառայի եկող մարդիկներէն չեմ, դուն որի՞ն տունը կը հարցնես կոր, մի՛ նայիր որ բարասը մինչեւ հոս եկար, վաղը առտու կամ փոխգիրը կ'ստորագրես եւ կամ չորսերնիս մէկ կ'ըլլանք ու նորէն քեզ առօք փառօք քու տունդ կը տանինք»:

Եւ իրաւունք ալ ունէր այդպէս ընելու, որովհետեւ լսածիս նայելով հիմայ եկեղ. նոր կարգադրութիւն մըն է հաստատուել, որուն համեմատ եթէ մեռել մը կամ մկրառող մը եկեղեցի բերուի, պէտք է որ կամ ծախքը կանխիկ վճարուի եւ կամ հաստատ երաշխաւոր մը առնուի: Հակառակ պարագային մեռնողը կամ մկրտողը տուն պիտի վերադառնայ:

Հետեւաբար ըրածին գիտակ այդ Թաղականը երբ կը նայի որ դադաղին մէջէն ձայն չի հաներ ան, «լուծութիւնը հաւանութեան նշան է» ըսելով գոհ սրտով կը մեկնի, իրեն հետ դուրս հանելով միւս երեք հոգիներն ալ՝ որոնք բարեւ բռնած իրեն կը հետեւին, եւ որոնք իբր վկայ պիտի գործածուէին ի հարկին:

Առտուն, տեսնելով որ յուղարկաւորութիւնը պիտի կատարուի, կրակ կտրած դադաղին կը մօտենայ ու ձեռքովն ալ փոխանակագիրը բռնած կը պոռայ երեսն ի վեր. «Ծօ՛, ես բրաթիք մարդ եմ, կ'իմանա՞ս, ես աս փոխգիրը կ'ստորագրես, ես կ'եղլաս տունդ կ'երթաս, Թաղական ըսելով մ'անցնիր»:

Մեռելին ազգականները տեսնելով որ այս կատակերգութեան վերջը չի պիտի գայ, յանձն կ'առնեն ծախքը վճարել նոյն իսկ փապուղիին դրանը պոչեւ, բայց Թաղ. անհանրը նորէն կը հակառակին, ու այն պ-

տեն միայն կը հաճին կատարել յուզարկա-
ւորութիւնը երբ վերջապէս ապահով երաշ-
խաւորութիւն մը կը ներկայացուի իրենց,
որով չ'ստորագրուած փոխգիրք կը պատռեն
եւ մեռելը կը թաղուի... քարեքախսաքար,
որովհետեւ... մօտ էր հոտիւր:

Չ'եմ կարծեր որ ուրիշ թաղի մը մէջ
պատահած մեռելին խնդիրը մեծ տար-
բերութիւն մը ունենայ սա պատմա-
ծէս, շատ շատ գրագիրին կամ թաղա-
կանին տարբերութիւնն է՝ որ աչքի պիտի
զարնէ, սակայն ամէն պարագայի մէջ պիտի
խնդրեմ մեռելին տիրոջմէն որ այդ մասին
հաճի տեղեկութիւն մը տալ Հանրագիտակի՝
գոհացում տալու համար իր հետաքրքրու-
թեան:

...

Գանք հիմայ կնուների մոմի խնդրոյն, ո-
րուն համար ըսուած էր թէ իմ ասկէ առջի
գրած յօդուածս, սխալ տեղեկութեանց վը-
րայ հիմնուած է եղեր:

Կարծեմ չը գիտցող չի կայ թէ ժողո-
վուրդը իր սովորութիւնները ունի: Ու ա-
մէն անոնք՝ որոնք զերծ մնալ կուզեն որ եւ
իցէ խճճանքէ պարտին գիտակ ըլլալ այդ
սովորութիւններուն՝ որոնցմէ չ'եմ գիտեր քանի
երորդը ահա մէջ կը բերեմ հոս:

Եթէ մէկը բան մը պատմէ եւ կամ գը-
րելու ըլլայ, ու իր այդ պատմածը կամ
գրածը թէ որ իր բնական վայրէն դուրս,
տարբեր տրուարձանի մը մէջ է տեղի ու-
նեցած, պէտք է այդ արուարձանին ա-
նունն ալ իմացնէ, հակառակ պարագային
իբրեւ սխալ խօսող կ'ամբաստանուի, ու
մէկ շարքէն մինչեւ մէկ ամիս անոր ա-
սոր բերնի ծամոց ըլլալու կը դատապար-
տուի:

Չոր օրինակ, եթէ Սամաթիացի ես, Սա-
րը-եարի մէջ ինքզինքը ծովը նետելով խեղ-
դուող մարդու մը պատմութիւնը ըրած ա-
տենդ՝ տեղին անունն ալ պիտի իմացնես,
հակառակ պարագային պիտի տեսնես որ
անպատճառ Սամաթիացի մը պիտի տնկուի
առջիդ ու պիտի հերքէ ըսածդ: Անա՛նկը
չէ, — պիտի ըսէ ան — այդ բանը գիտեմ,
հոս պատահեցաւ, հէմ խեղդուողն ալ Սալ-
մաթօմրուխցի խահվէճի Միխայիլն աչկերտն

էր, ես աղէկը գիտեմ, ան ինքզինքը ծով
չի նետեց, սխալ ըսեմ եմ քեզի... Ինք
Սանտրիս պուռնիէն ծովը մտաւ, բացերը
գնաց, ինքզինքը զապի չի կրցաւ ըրեր էր
... խեղդուեցաւ:

Ու դուն ցաւ կ'զգաս որ Սամաթիայի մէջ
ալ ատանկ մէկը խեղդուեր է եղեր, առանց
անդրադառնալու ըսողին միամտութեանը
վրայ:

Ասանկ բան մըն ալ ինծի պատահեցաւ
սա վերջերս:

Մանգումէի մէջ մոռցուած պարսամուր-
հակը վերնագրով, կնուների մոմի մը պատ-
մութիւնը ըրած էի, բայց չ'էի ըսած թէ ո՛ր
արուարձանին մէջ պատահած է այդ պատ-
մածս, եւ որովհետեւ Իսկիւտար կը բնա-
կիմ, քանի մը Իսկիւտարցիներ խճճեր են
գրածս՝ ըսելով թէ այդ բանը, հոս, Իս-
կիւտարի մէջ է պատահած, բայց Սաքաեա-
նի գրածը սխալ տեղեկութեան մը վրայ
հիմնուած է: Եւ իրենց ձայնը այն աստի-
ճան կը խոչորնայ որ վերջապէս արձագանքն
ալ Հանրագիտակի ճամբով կուգայ կը հասնի
ականջիս:

Ու որքա՛ն մեծ կ'ըլլայ ցաւս, երբ կ'ի-
մանամ թէ Իսկիւտարի մէջ ալ տեղի ու-
նեցեր է ատանկ տգեղ իրողութիւն մը, սա
տարբերութեամբ որ պատմածս՝ հոն՝ տեղի
ունեցածին այնքան չ'է յարմարեր, սխալ է
նկատուեր, բայց սուտ ալ չ'է եղեր:

Եւ ահա, նախորդ գրութեանս մէջ՝ ա-
րուարձանին անունը տուած չ'ըլլալ՝ պատ-
ճառ կ'ըլլայ որ երկու շարքերնի ծամոց
ըլլալու դատապարտուիմ նոյն իսկ քանի մը
արժեւն չ'արժեւներու կողմանէ:

ՍԱՐԳԻՍ Ս. ՍԱՔԱԵԱՆ

Ձ Ե Կ Ո Յ Յ

Ստացանք Երուանդ պէյ Երեսուֆ Վար-
ժապետեանէ յօդուած մը, «Մագրի-գիւղի
Տատեան վարժարանը եւ Թաղ. Խորհուր-
դին արդիւնաւոր պաշտօնավարութիւնը» վեր-
նագրով, զոր պիտի հրատարակենք յաջոր-
դիւ:

ՃԱՇԱԿԵՑԷ՛Ք

(Որհրամոխական Բ. յօդուած)

«Կեցցէ անձն իմ եւ օրհնեսցէ զքեզ, ըսած է չեմ գիտեր Դաւիթ թէ Կիրակոս... մարգարէն, թէ եւ չեմ ալ ճանչնար թէ՛ ո՛վ է Դաւիթ կամ Կիրակոս մարգարէն, եւ երբ ու ի՛նչ պարագաներու մէջ ըսած է այս վըսեմ խօսքը: Խնդիր չէ սակայն անոնց ինքնութիւնը. իրողութիւնը սա՛ է թէ միջտեղը ըստուած խօսք մը կայ որ *à propos* կը յարմարի իմ այսօրուան պաշտպանած դատիս եւ կրնայ երեսու ճերմակ հանել:

Այսպէս ըստ Դաւիթ մարգարէին մարդ ապրուելու եւ զԱստուած փառաբանելու համար պէտք ունի նախ լաւ մը... ուտելու:

Ճաշելէն վերջ եկեղեցի երթալը առաջին կանոնը ըլլալու է, բոլոր Քրիստոնեաներուն, քանի որ անօթի փորանց մարդ չկրնար ուզածին պէս սրտաբուխ աղօթքներ եւ մաղթանքներ ուղղել առ բարձրեալն Աստուած, եւ ոչ ալ կրնայ ասանկ շնորհքով յօդուած մը գրել:

Անօթի փոր մը միշտ փորձանք է մարդուս գլխուն, ըսած են մեծ իմաստասէրներ եւ... Աբրահամ Այվազեան: Ասիկայ տառական իմաստով ճիշդ է եթէ լաւ մը խորհելու ըլլաք այն վայրկեաններուն վրայ, երբ ձեր փորն ալ իր կարգին թմբուկ կը զարնէ:

Ուրեմն սա՛ ստոյգ է թէ պարապ ստամոքս մը, յայտնի պատճառ մըն է նաեւ դատարկ գլուխի մը: Ա՛յս չէր շարժառիթը որուն համար Քասիմ երկար խմբագրական մը գրեց տղայոց ոչ միայն դաս՝ այլ եւ ձրի ճաշ ալ տալ առաջարկելով. եւ այս չէ՞ր պատճառը որ մի եւ նոյն ատեն անցեալ շաբթու Անգլիոյ մէջ անօթի դպրոցական տղոց ձրի ճաշ տալու համար լուրջ խորհրդածութիւններ տեղի ունեցան: Որովհետեւ աւելի լաւ է որ դպրոցական տղայ մը պարապ... պայուսակով վարժարան երթայ, քան... պարապ ստամոքսով:

Կը տեսնաք ուրեմն թէ որչա՛փ մեծ տեղ մը կը գրաւէ լեցուն ստամոքսը, հակառակ իր պզտիկութեան, եւ որչա՛փ կարեւոր ու

էական պարագայ մըն է ամէն բանէ առաջ զայն գոհացնելը:

Ուրեմն այս մեկնակէտէն մեկնելով կը հասնինք... Սիրքէճի Թրամվային ճամբան Քէօբրիւլի խանին դէմ գտնուող վարպետ Եանիին մեծահոջակ Իքի գարուլու 8-10 թիւ ճաշարանը որ նախապէս մուհաճիտ անունը ունէր:

Չկարծէք սակայն թէ այս մեծահոջակ ճաշարանապետը, վարպետ Եանին՝ որ ամենայն ձեռնհասութեամբ կը վարէ իր ճաշարանը. պէտք ունի իմ ուշաքամիս:

Ո՛հ, ոչ. անիկայ այնչափ մեծ համբաւ մը ունի որ իմ այս գրածս սաչափ օգուտ մը իսկ չընծայեր իրեն:

Բայց չըսի թէ ինչպէս եղաւ որ այս բարեսիրտ ճաշարանապետին հետ ծանօթանալու պատիւը ունեցայ:

Օր մը խմբագրատունը նստած երբ կը մտածէի՝ մտածելու համար, յանկարծ ներս մտաւ մեր սիրեցեալ բարեկամ եւ ամենասիրելի մտերիմ, Քասիմին եղբայր եւ Գում-գարուի դուրսի Թաղ. Խորհրդոյ անդամ մեծայարգ Սարգիս Էֆէնտի Գոչունեանը, *cure dent*ով մը ակռաները խառնելով եւ լեցուն ստամոքս ունեցող մարդու մը վսեմ նայուածքները նետելով վրաս: Ո՛հ, իր այդ վսեմ նայուածքին տակ խոնարհեցայ յարգանքօք ոտքի ելլալով, բալթօյիս կոճակները կոճկեցի, դէմքիս ողբերգական վիճակ մը տուի, եւ ետ ետ երթալով, իմ խորին հիւանդուս յայտնեցի իր վսեմ ստամոքսին, որ... լեբ լեցուն էր, ինչպէս կերելէր իր մարմնին արտաքին կողմէն:

Գում-գարուի դուրսի այդ Թաղ. Խորհրդոյ անդամը, Ազնուաշուք Սարգիս Էֆէն, եղբայր Մանգումէի խմբագրապետ Քասիմին, վայրկեան մը կեցաւ եւ ուշադիր երեսու նայելով հասկցաւ միտքս եւ առաջարկեց վարպետ Եանիին ճաշարանին նուիրուած ուշաքամախառն յօդուած մը գրել, պայմանաւ որ ան ալ իր կարգին գաղափար մը կազմել տայ ինձ իր ճաշարանին համադամներուն վրայ:

Առաջարկութիւնը հիանալի էր, երբ մանաւանդ այդ առաջարկութիւնը գործնական մէկու մը կողմէն կուգար:

Ու նստայ . . . գրասեղանիս առջեւ եւ գրեցի :

Վարպետ Եանի, տէր Օսմանիէ ճաշարանին, ամէն ճաշարանապետի պէս բնիկ Իւրբիւպցի, հազիւ քառասուն տարեկան միջահասակ, գիւրուկ եւ նոր հարսի մը չափ գեղանի մարդ մըն է : Իր հետ խօսողը անմիջապէս կը համակրի իրեն եւ կուզէ ամբողջ ճաշարանին խորտիկները եւ համադամները լափել . . . հաճոյք մը պատճառով եւ համար վարպետ Եանիին :

Իր ճաշարանը, ընդարձակ է եւ մաքուր իր տիրոջը պէս ուր միշտ կը գտնուի լաւ ու համով կերակուրներ եւ ընտիր խմորեղէններ (զորս այնչափ ճարտարութեամբ կը պատրաստէ իր եղբօրը չափ հանրածանօթ Եուաքիմ աղան) : Ահագին թիւով յաճախողներ ունի եւ երկուստանեակ մըն ալ կառսողներ, որոնք ամենայն ժրութեամբ կսպասարկեն քեզի, եւ ասկէ ետքն ալ պիտի սպասարկեն ինծի . . . պախշիշ սպասելով :

Ապուխտին աղէկը կեսարիայէն, տանձին աղէկը Թոքաթէն եւ կերակուրներուն աղէկը . . . ուստա Եանիին ճաշարանէն կելլայ :

Վարպետ Եանի շատ խօշ մարդ մըն է. բացատրելու համար թէ՛ ո՞վ է ուստա Եանի եւ ինչ Տօն Քիչօթեան քաջագործութիւններ ըրած է, պատմենք անոր մեծահռչակ անեքօսներէն մէկը, որ պատիւ կը բերէ իր հնարամտութեան :

Ուստա Եանի, օր մը Պրուսա կերթայ զրօսական պտոյտի, եւ ինչպէս չերթայ երբ օրական 1000է աւելի փափկաճաշակներու ճաշ կուտայ եւ բազմաթիւ ընտանիքներու ալ տունը ճաշ կը զրկէ :

Այսպէս երբ օր մը կառքով պտոյտի կելլայ դէպ ի ջերմուկները, ճամբան կը հանգիպի ըմբիշի մը, որուն հետ կառաջարկէ գօտնմարտիլ, որպէս զի իր քով գտնուող կիներուն առջեւ ցուցնէ թէ ինք որքան մեծ ու համբաւաւոր ճաշարանապետ մը, նոյնչափ մըն ալ քաջամարտիկ ըմբիշ մըն է :

Բայց իրականին մէջ ուստա Եանի լաւ գիտնալով թէ ինք պիտի յաղթուի, կամաց մը կը մօտենայ ըմբիշին ու պանքօթ մը տալ կառաջարկէ, եթէ ինք յաղթուի :

Պանքօթ մը. ըմբիշը կը համակերպի եւ . . . կը յաղթուի :

Այդ օրէն ի վեր ուստա Եանի, ինչպէս հոս Սիրքէճի իբր մեծ ճաշարանապետ, նոյնպէս նաեւ Պուրսայի մէջ մեծ համբաւ կը շահի իբրեւ քաջ ըմբիշամարտիկ :

Դեռ շատ մը հաճոյքի անէքթօտներ ունի, որոնք եթէ մտիկ ընել կուզէք, դիմեցէք ուստա Եանիի Օսմանիյէ ճաշարանը, եւ ճաշակելով մէկտեղ մտիկ ըրէք իր սրամիտ պատմութիւնները :

Չմոռնամ ըսել թէ՛ ձեր առաջին այցելութեան առթիւ մի՛ մոռնաք յիշել նաեւ այս յօդուածը, որուն գրութեան պատճառը կրնաք նաեւ երեւակայել թէ, որ աստիճանի կենսական է . . . ստամոքսիս տեսակէտով : Չի մոռնամ ըսել թէ ուստա Եանի խմբագրական եղանակով կը վարէ իր ճաշարանը, բաժանորդներ արձանագրելով :

Դուք իմ կարողութիւնս գրիչս պիտի դատէք. իսկ ես ձերինը, զիս ուստա Եանիին առջեւ բարձրացնելէն :

ԲՈՐՈՍԵԱՆ ԳՐԻԳՈՐ

Գրութեանս դուրս . — Պիտի խնդրեմ Պ. Արտաշէս Յարթինթինեանէ, որ այս որկրամոլական յօդուածս հաճի չեղեալնկատել գրագիտութեան պատմութիւնը գրած ատեն, նոյնը կը խնդրեմ նաեւ Պ. Գազանձեանէն, իր տարեկան տեսութիւնները գրած ատեն, որոնք ո՞հ, եթէ չգրուին անխուսափելիօրէն աշխարհս չգառնար, լուսինը ցերեկը կը ծագի եւ արեւը . . . գիշերը :
Նոյն



Անհաւատարիմ կի՛ն մը դժուարամարս կերակուր մըն է, պատուաւոր ամուսիններն դուրս տալով զայն կրնան հանգստանալ, իսկ անպատիւները շատ դիւրութեամբ կը մարսեն և աշխարհիս ամէնէն աւելի սննդարար և առողջարար կերակուրը կը ներկայեն զայն ուրիշներուն :

ԱՆՃԱՆԱՁ ԴԵՄՔԵՐ

Ե. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

«Տեր ողորմես» ով ողորմեալ զաւել-
տագիր, «Սուրբ» ով սրբացեալ գրագէտ,
նախանձելի երգիծաբան, գլխաճաղատ բա-
նաստեղծ եւ տիրացու խաֆալ տիրացու:

Ծնեալ յամի տեառն . . . (բիշ մը կըն-
կան պէս տարիքը պահող ըլլալուն՝ հոս
թուականը չենք դնել զինքը չի վշտացնելու
համար) յամսանն րուսի Հազիրան, Հռովմ.
Յունիս, Ալարիայի Նաթար եւ Հրէից Ադար
վէ Ադար 4, 7, 9, 11, 13ին, յաւուր շա-
բաթու ի մէջ գիշերի ի տարածամու կի-
րակամտի, ի մի մօրէ եւ փոխադարձա-
բար:

Մինչ սա տղայ էր, իբրեւ զտղայ խորհէր
իբրեւ զտղայ համարէր, այլ յորժամ եհաս
ի չափ, իր ծնողքը զինքը գրին այն ատեն-
ուան Սկիւտարի ձեմարանը, ուր հետզհետէ
հոն թողաթլեանի ճաշացուցակէն շատ գըտ-
նուած ութիւնները կը մթերէր, կ'ամբարէր
կը զետեղէր իր ուղեղագեղ գպնկին մէջ,
սակայն սա ի մէջ բազում ութիւնաբանու-
թեանց ամենէն յաջողակն էր տիրացու-
թեան մէջ, որուն հոգում չափ փարած էր
փառաւրդ կերպով, ուրիշ ութիւններու մէջ
ալ թէեւ ամենէն յաջողակն էր եւ որուն
փոխարէն դասատուները միշտ 10ը նիշը կը
դնէին, սակայն յաճախ կը մոռնային առջեւի
մէկը դնել, որուն հետեւանքով միշտ թիւը
կը մնար 0:

Իր դպրոցական վարքը՝ այսօրուան ու-
նեցած զաւելտագրական վարկին պէս նա-
խանձելի (ի վ. Փափազեանէ) չէր, քանի որ իր
բարի վարքովը չորս անգամ արտաքսուած
էր վարժարանէն, սակայն շնորհիւ իր տի-
րացուութեան՝ վերստին ընդունուած էր:
Երբ սա աւարտեց իր դպրոցական չրջանը
կամ չրջանը զդպրոցականը, քիչ մը ժամանակ
առեւտրական կեանք (իմա ուշախուրթիւն
կամ վարկելութիւն) վարչէ վերջ, գրկեց իր
սիրած . . . տապարէզը՝ որ է տիրացու-
թիւն, յորում կայ եւ մնայ մինչեւ ցայսօր
ժամանակի 11 զրէ 27 փարայ աւուրչէքով:

առանց սակայն ունենալու «անձնական
կառք»:

Եւ սակայն, ինչպէս որ աշխարհս կը
դառնայ, գինովին գլուխը կը դառնայ, խելք
ունեցողին խելքը կը դառնայ, գինին քա-
ցախի կը դառնայ, ամացողին գոյնը կը դառ-
նայ, անկուտի մարդը տուած խօսքէն կը
դառնայ, հին հովանոցը հովէն կը դառնայ,
լեզուն բերնին մէջ կը դառնայ, այս տար-
ուան գօսքիւնը գալ տարի թերս կը դառ-
նայ, մեծ պահքին շատ լուբիայ ուտողին
ներսիդին կը դառնայ: Եւ քանի որ
վերջապէս, ինչպէս ըսի վերը, կը դառ-
նայ ու կը դառնայ, ինչո՞ւ տիրացուն
ալ զաւելտագիր չի դառնայ: Եւ այն Տէրը
որ տուաւ Սողոմոնի իմաստութիւն, սըր-
բակրօն վարդապետին՝ եղական քարոզչի
կարողութիւն, վ. Փափազեանին «քալէ
քա թագուհի տօլմային տակը առաւ» ական
զաւելտագրական տաղանդ . . . , ճաշա-
րանապետ Յովսէփ աղային կառսօն-գրագիր
Պ. Լեւոնի՝ յաճախորդաց 200 հաշուետետ-
րերը մէկէն բռնելու չափ տոմարագիտու-
թիւն եւ թաշխըն ճէրվէլօ, Ատա-բազարի
Տէր պապային երաժշտական ճաշակադարձ,
ուրեմն ինչո՞ւ չողորմի եւ չի տայ տիրա-
ցուն գէթ վ. Փափազեանին չափ զաւել-
տագրական հանճար, քանի որ նա 20 տա-
րիէ ի վեր անդուլ անդադար ի գիշերի եւ
ի տուընջեան կերգէ Սուրբ, ալէլուեա, ու
Տէր ողորմես:

Ասոր մէջ, ի՞նչ կայ զարմանալու եւ կամ
նախանձելու:

Այս չափով կարծեմ մասամբ կարողա-
ցանք ճանչցնել Ե. Գուլումճեանի անձանաչ
դէմքը եւ եթէ հարկ ըլլայ, յառաջիկային
բոլորովին կը ճանչցնենք:

Մնամ Սկիւտար

Կենսագրիչ

ԵՐՄՈԳ (*)

(*) Ծ. Խ. — Մեր յարգելի զաւելտա-
գիր աշխատակից Երմոգ, մեզ զրկած է
խիստ ծիծաղաշարժ յօդուած մը «Սաթընի
Մոսիկին ամուսնութիւնը» վերնագրով, զոր
պիտի հրատարակենք յաջորդ թիւով:

Պ Ք Ո Ւ Ա Պ Ն Ն Ր

(ՅԱՆՔԷՋԻ)

(ԿԵՐԻՎԱՐԺԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՑԶԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ)

Դիտուն ֆահանայ, ուսուցիչ հրմուս
Հայր մը երկիւղած եւ գորովագութ,
Ծերոյթի բեռան սակ կորսաւանակ,
Կ'աշխատի անդու Սարգիսեան Սահակ:

Պարթեւ հասակով եւ մարմնով քիկնեղ
Կ'ուսումնասիրէ հիներն ամեն հեղ,
Արուեստն է յաճախ, ուր մասունք բանին,
Հրանտ Ասատուր մեր փաստաբանին:

Հրմուս չափագէտ, գիտուն բուաբան,
Բըսան կը գրուցէ թէ հարցնես մեկ բան,
Անխոնջ ուսուցչի միակ ընտելի,
Յովհան Մուրատեանն է մեր սիրելի:

Վարիչ մ'է վարպետ խիստ օրինասէր,
Թէ սիրես օրհնի՜ կը սածէ քեզ սէր,
Քիչ մ'եթէ շնորհս, պատճէ շարունակ
Ով որ ալ ըլլաս, Գառնիկ Բարունակ:

Այս ալ իրաւաբ բուն հայ վարժապետ
Ուսանողները կը սիրէ թեպէտ,
Բայց խիստ կը պատճէ սխալ մը պզտիկ
Բաջ լեզուագէտը Ստեփան Կուրտիկ:

Ծիշտ արեւելեան ունի բարձր վրստ,
Երբեք չի սիրէ ըլլալ խստադէտ,
Վարպետ բարգմանիչ, յաւ ալ լեզուաբան,
Զանչցա՜ք ով է Նա, Պ. Քերեստեան:

Մարմինը փափուկ, կամքը երկաթ,
Դեմքն անդադար հեզմանք է՜ր կաթ,
Չբաժնուողին գրաբար կուտփէ,
Մեր հին ուսուցչին Յակոբին Գուրգեն:

Թէ լեզուագէտ է եւ թէ հոգեբան,
Սա գիտէ տղուն տալ սէրը ուսման,
Ժպիտով մ'անոյ՜ Հիւրիւեան Յովհան
Կրնայ լացընէլ անգուսպ անզգան:

Աս ալ նորէլ մ'է Թօփանեան Յակոբ,
«Տէլիքեան խնդիր»ին անխոնջ փառակոյ,
Տասնը հինգ լեզու գիտեմ կ'ըսէ ինք,
Զեռնհաս չենք որ ֆենեկ մէջը գինք:

Փոխն ի փոխ փոխեց հագուստ ու գօտիւմ,
Մեկ պաշտօնէ միւս, ըսաւ նա ուսում,
Տեսուչ, վարժապետ, ֆենիչ, պատմաբան,
Խմբագիր, գրագէտ Մարկոսը Նարան:

Աս ալ թծիչ մ'է Եղուարդ Կ. Մասիս
Որուն խօսերն են, չիղ, ոսկոր, մորթ, միս,
Իր շունչ առնելներն շատ քիչ կը տեսնէ,
Խօսած ասեմը, վագէ՜ ասեմէն:

Բրօքսկորն է Յակոբ Աբրահամ
Որ ցամաք նիւթին կուտայ անոյ՜ համ,
Դասն որ ունկնդրես հագիւ մեկ անգամ
Կ'ըսես — «գալ շարքու նորէն պիտի գամ»:

Խեղճ Պարոնեանին արտակից ընկեր,
Մարդ մ'որ կեանքին մեջ շատ ելեր ընկեր,
Սպիտակ լաթի կտոր մը խկոյն
Սիմոն Եղգրանեան կ'ընէ հազար գոյն:

Հին օրեր տեսած ուսուցիչ համեստ,
Դրեղ ու գծելն ընտրած իբր արուեստ
Ուսանողին հետ կ'աշխատի լոկի,
Զերմ փարած բուդաբին՝ Թահրանեան Խաչիկ:

Քեզ ինչպէս մոռնամ Եամտանճիմ, Միքէ՛ս,
Որ «Սիրեն իրերու» երթելըն փակես,
Միայն թէ հոգիս անուրի սակ մեկ,
Երկու ձմերուկ չըլլար, ո՛հ, երբեք:

Դիտուն մ'է Ժանօթ խիստ շատ փիլիսոփայ,
Բընութեան հետ է մարդոցմէ հեռու,
Քիմիագէտ մ'է անլիքլամ անխօս
Մեր Մուրատեանը տաւ իզնատիոս:

Երիտասարդ մ'է առողջ գեղանի
Դիտութեան համար մեծ սէր մը ունի,
Միշտ նոր քօսութիւնով, միշտ օճիկով սեպ,
Ահա շիք միւսիւն, Գուլամնեան Յովսէփ:

Այս ալ հրմուս է հաշուի տօմարի,
Սովորեցրելու ջանք կ'ընէ կարի,
Համակրելի է երբոր կը ժպտի,
Տոմարագէտը Սեփոն Էփենի:

Զիլինկիբեանը մոռցա՜նք յիշելու,
Եռանայն երգիչը մեր աչելու,
Ասուծոյ համար շատ ծանր մարդ է,
Ես հինգ որ գրուցեմ դուն տասն ալ բարդէ:

Ռօպերթ զօղեմի ուսուցիչներէն
Դաս աւանդողը մերք անգլիերէն,
Միերան ծեծիզը մարդը այն ազնիւ
Որ բուռի ապրիլ փայլ ոսկի կուտիւ:

Աս այ տղայ մ'ե խոնարհ ամօթխած,
Ռօպերթ զօղեմի փայլուն վկայուած,
Այֆերը սակայն կօշիկին վրան
Դասը կ'աւանդէ Մուրատեան Տիրան:

Մեծով սկսանք, բարձրով վերջացնենք,
Մեր այս Ֆանթեզիան անկեղծ ու անենեզ,
Ուստի անպէտք մեր խեղճ գովեստին՝
Յիշենք Յակոբօս Յակոբ հփենսին:

Բերա

ԳԱԼՈՒՍՏ ՆԱԶԱՐԵԹԵԱՆ



ԵՍ ԱԼ ԿԸ ԽԸՄԵՄ

Առ Տեառ Համազասպ Ս. Խաֆի
Իզմիր

Երբ ես ալ գտնեմ պատուականագոյն
Իզմիրի տիգը անարատ անգոյն,
Կարելի՞ է որ չեմ խըմեր ըսեմ
Ու սըտախօսի մուր դէմքիս քըսեմ:

Ո՛հ, ոչ, երբէք, ոչ ես չեմ խօսիր սուտ
Բայց ո՛ւր պիտ' գտնեմ այն տիգ օղին զուտ
Որ պատրաստուի տեղւոյդ չամիչէն
Որուն մենք նոյն իսկ գոհ կըլլանք քիչէն:

Դուք մի՛ դադրիք դայն կիօլսէն նետելէ
Բայց զգուշացէ՛ք ընել մեռելի
Զի մենք ալ մարդ ենք Աստուծոյ ծառայ
Բայց բերել տալու չափ չունինք փարայ:

Երբ պատահի որ ընկերողդ համար
Մտադրես ընել նուէր մը յարմար
Երբէք չեմ ուզեր դայն մեծ ֆրչիով
Սանկ, քիչիկ մը բան, եւանկեքճիով:

Ո՛հ, այն ատեն ես կը խըմեմ ...:

Մնամ

ուր որ եմ

ԵՐՄՈԳ

ՕՐԱԳԻՐԱ

- Կիմանաս կոր, ըսաւ բարեկամներէս:
- մէկը անցեալ օր Արեւազալի առաւօտ մը:
- Ի՞նչ բան, ըսի կամաց ձայնով մը:
- Ուրեմն չես իմանար կոր.
- Ի՞նչպէս չեմ իմանար կոր.
- Ի՞նչ պիտի ըլլայ ասոր վախճանը.
- Զ'իյտեմ իրաւ որ.
- Ցաւալի բան.
- Խղճալի չիտակը.
- Էյ Ի՞նչ կարծիք ունիս նայինք այս մասին:

Առանց խնդիրը հասկցած ըլլալու, կարծիք յայտնելը թերեւս տխուր արդիւնքներ կարենար յառաջ բերել, ուստի ստիպուեցայ հարցնել բարեկամիս թէ Ի՞նչ բան զինքը կը տանջէ:

— Ի՞նչ պիտի ըլլայ ըսաւ, բարկացոտ շեշտով մը, տես սա աղջիկները առանց խպենելու Արեւազալը կ'երգեն կոր:

— Էյ Ի՞նչ կ'ըլլայ եղեր.

— Ի՞նչ պիտի ըլլայ, վաղն ալ թող սարկաւազուհիութիւն ընեն:

— Ըստ իս, ըսի, ատոր մէջը երբէք առտառոց բան մը չեմ նշմարեր, քանի որ եթէ երգողները աղջիկներ չ'ըլլային՝ եկեղեցին այսչափ հաւատացեալներու բազմութիւն մը չպիտի ունենար, պնակները հասութաբեր չպիտի ըլլային, մայրերը պարծենալիք տեղեր չպիտի ունենային:

Գլխուս բան մը իջեցնելու ձեւով մը մեկնեցաւ քովէս:

Երիտասարդներէն սկսեալ մինչեւ տարեցները, տգէտներէն մինչեւ գիտունները, թեթեւներէն մինչեւ լուրջ դատողները մէյ մէկ կարծիք յայտնեցին եռաձայնի մասին, ուստի ինքզինքս չափազանց վիրաւորեալ պիտի զգամ եթէ երկու խօսք ալ ես չընեմ այդ առթիւ:

Իմ մասիս բնաւ փոյթս չ'է թէ եկեղեցւոյ երգեցողութիւնները միաձայն ըլլան կամ թէ եռաձայն, ատիկայ երբէք զիս չի չահաքըռեր, միայն թէ ջիղերուս դաշնիւք բան մը եթէ կայ, այն ալ թերթերու մէջ ե-

ղած հետեւեալ ազդարարութիւններն են. այն ինչ խումբը, այն ինչ օրը, այն ինչ տեղը պիտի երգէ:

Մարդ Աստուծոյ, յայտագիր կը ծանուցանէք ի՞նչ կ'ընէք:

Եկեղեցւոյ մը քարոզիչը յուզեալ շեշտերով աղքատի մը համար ծանուցում կ'ընէ ժողովուրդին, որպէս զի առատ ողորմութիւնով ուրախացնէ այդ դժբաղդ ընտանիքը:

Հաւատացեալները ի զուր կ'սպասեն այդ ակնարկուած պնակին, որ դժբաղդաբար կուշանայ:

Արարողութիւնները կը վերջանան եւ ժողովուրդը եկեղեցիէն մեկնած պահուն, մարդուն մէկը այդ պնակը ձեռքը, մէյ մը մէկ կողմ, մէյ մը միւս կողմ կըսկսի վազել դրամ ժողովուրդ եւ մի եւ նոյն ժամանակ մարդ չի փախցնելու համար, չի վարանելով նոյն իսկ պնակը մօտեցնել տիկիներու ...:

Ես չիտակը այդ մարդը նմանցուցի Սէլամըզի պողոտային վրայ գտնուող այն մուրացիկ տղուն, որ անկիւն մը քաշուած կը կծկտի եւ ծանօթ դէմք մը տեսնելուն մառախի պէս ցատկուտելով կը մօտենայ անցորդին վրայ տասը փարայ մուրալու համար:

Խնդիր է գիտնալ թէ՛ կէս ժամ առաջ այդ մարդուն խելքը ո՞ւր էր, եւ արդեօք պնակը յուսալից արդիւնքը ունեցա՞ւ:

Անցեալ օր կամուրջին վրայ ականատեսը եղայ աղուոր տեսարանի մը:

16—18 տարեկան հոռոմ աղջիկ մը մօրը հետ մէկտեղ Պոլսոյ կողմէն Ղալաթիա կ'անցնէր:

Կամուրջին վրայ պիւսֆիլ ծախող հրեայ ըսկոտին մէկը սանկ կամաց մը կամտոնց աղջիկը:

Աղջիկը որ կերելի թէ չափազանց պատուախնդիր էր առանց վարանելու ոտքի կիցով մը տակնուվրայ ըրաւ տղուն ամբողջ հարստութիւնը:

Պիւսֆիլները սկսան զլտորիլ հոս հոն, ու հոռոմուհին եղածին վրայ խրոխտ նայուածք

մը նետելէ յետոյ մեկնեցաւ ամենայն պաղարիւնութեամբ:

Անկեղծ ըլլալու համար ըսեմ թէ եթէ համարձակութիւնս այդ պահուն չի պակսեր խոնարհելով պիտի համբուրէի հոռոմուհիին այդ զոյգ մը քաջագործ տոհմները:

ՆԵՐՇԱՊՈՒՋ (*)

(*) Մ. Խ. — Մեր յարգելի աշխատակից Ներշապուհէ « զեկզեկը » վերնագրով զաւելտական յօդուած մըն ալ ստացած ենք, զոր պիտի հրատարակենք մեր մօտակայ մէկ թիւին մէջ:

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ԱՐՁԱԳԱՆՔ

Ահա բարեկենդանն ալ անցաւ, այս տարուանը սակայն՝ նախորդին հետ բաղդատմամբ՝ գերազանց կը նկատուի: Այնպէս կ'ըսեն թէ, Պոլսոյ արուարձաններէն Գառնգիւղի « մասխառանները » առաջինը հանդիսացան, շնորհիւ տեղւոյն երիտասարդ դասակարգին — մանաւանդ մի քանի գեղադէմ երիտասարդուհիներու — զուարթութեան: (Որոնցմէ, « անդրը-բառանդէզ », պատգամուհիները հրաշալի էին):

Եւրոպայի մէջ ալ այս տարուան « մասխառայութիւնը » գոհացութիւն ըլլալ կը նշկարագրեն հոն տեղի թերթերը: Իբր նմոյշ պատմութիւն մը քաղելով հրամցընեմ սիրելի ընթերցողներուս:

Նաբօլիի մէջ՝ (Իտալիա) գեղանի աղջիկ մը վեց թեկնածու ունէր (երջանի՛կը, արդէն Նաբօլիի օրիորդները մեր Խաբուտաղջիներուն պէս շատ չիրին են, ականջնին խօսի):

Այդ կէս տիւզիւնա սիրահարները մէկը մէկէ աւելի եռանդ կը ցուցնէին հաճելի երեւնալու համար չքնաղ « Նաբօլիթաշուհիին »: Այս վերջինը սակայն զանազան պատճառներով, կը վարանէր ընտրութիւն մ'ընելու այդ վեց թեկնածուներէն, (է՛հ, ուստութիւնը այդպէս է, կը շուարեցնէ՛ ես

Թէ մոլորիլ չիտայ)։ Աղջկան ծնողքը ազատ թողած էին զինքը իր որոշման մէջ, քանի որ այդ վեց երիտասարդներն ալ հաւասարապէս ընդունելի էին։ Այսուհանգերձ ամէն բան պէտք է վախճան մը ունենայ, արդ, աղջիկը վերջապէս կը տեղեկացնէ թէ՝ բարեկենդանի առթիւ իր վճիռը պիտի տայ, նախընտրելով այն երիտասարդներէն լաւագոյն ւ մասքէ՝ եղողը։ Այս տեղեկութեան վրայ, վեց թեկնածուներն ալ իրարմէ գաղտուկ պատրաստութիւն կը տեսնեն։ Մին առիւծ կ'ըլլայ (քաջութիւն նշանակելու համար), միւսը կով՝ (աննդաւէտ յատկութիւն մը ցոյց տալու նպատակաւ)։ Մէկը վագրի մորթով կը ծածկուի, (որ կը նշանակէ ժիրութիւն եւ միանգամայն կատաղի, կեանքի պայքարին մէջ), միւսն ալ թռչուններուն գլխաւորը կը ներկայացնէ, սիրամարդ — քալուզ գուշու — կ'ըլլայ (գեղեցկութեան ճաշակը շեշտելու համար)։ Հինգերորդը ճարպիկութիւնը ցոյց տալու գաղափարաւ կապիկ կ'ըլլայ, իսկ վեցերորդը՝ երիտասարդ իշխանի մը հագուստը կը հագնի։

Բարեկենդանի շաբաթ իրիկուն ուրեմն ամէնքն ալ աղջկան տունը կը հաւաքուին սրտատրուի, իրար չէին կրնար զանազանել, ինչպէս աղջիկն ալ։ Երեկոյթի զուարթ գիշեր մըն էր, վճռական գիշեր մը նաեւ, բոլորն ալ կը զուարճանային։ Վերջապէս ժամանակը կուգայ ընտրութեան։ Ուրքի վրայ կեցած՝ ներկայները կատարեալ լռութիւն մը կը պահէին։ Աղջիկը վեց թեկնածու մասքէ՝ ներուն վրայ հարեւանցի ակնարկ մը նետելէ յետոյ կ'ըսէ։

— Կը ցաւիմ որ իմ փնտռած ամուսինս անասուն չ'է՝ այլ մարդ արարած, հետեւաբար ձեր մէջէն սա (մասքէ) իշխանը կ'ընտրեմ որ զգացում եւ ճաշակն ունեցած է ինքզինքը գոնէ ազնիւ բանի մը նմանցընելու։

(Պաճօ՞ չիբին նաբօլիթանուհի)։

ՊԱԽՂՈՍ

ՀԻՆ ԷԶԵՐ

Ինչպէս մեր նախորդ թիւով խոստացեր էինք «Հանրագիտակ»ի յառաջիկայ թիւին մէջ կը բանանք բոլորովին նոր ու շահեկան բաժին մը՝ «Հին Էջեր» վերնագրին տակ, ուր հայ երգիծաբաններու ընտիր գործերէն հատուածներ պիտի հրատարակենք։

Թերթիս աշխատակիցներէն Տիար Գրիգոր Համբիկեան հայ երգիծաբաններու կենսագրութեան ձեռնարկած ըլլալով արդէն, խմբագրութեանս մասնաւոր հրաւերին վրայ ստանձնած է այդ նոր բաժնին խմբագրութեան հոգը։

Կը յուսանք որ «Հանրագիտակ» ի պատուարժան ընթերցողները հաճոյքով պիտի կարդան այդ երգիծական արտագրութիւնները, որոնք այնքան կը փնտռուին այսօր իրաւամբ։

Ա.

Թ. ԿԸԿՌԻԿԵԱՆԻ

«ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԸՆԾԱՅԻ»

Ախորժեղի հասուածներ

Կէս գիշերէն ետեւ ժամը երկուքին, դռանը չալուին ու վար վազելու մէկ եղաւ, ուր անհամբերութեամբ ըստ կ'սպասէի մանկաբարձ կնոջը գալուն և ուր կեցեր, կը լսէի եփրատ տուտու գրացուհւոյս տքալու ձայնը, որ տղաբերքի ցաւերուն տակը ճըվիկ ճըվիկ կը գար։ Սանդուխէն իշնալս ու բանալս ակնթարթի մէջ կատարեցաւ մանկաբարձին երեսը չը տեսայ՝ հրամմէ՝ Պիրիճիկ խաթ . . . բառին կէսը բերնէս չեղած։

«Ա՛ռ քեզ զօրութիւն» ձայնի մը հետ, չըռա՞ք . . . «աս ալ իմ» փաթաթը . . . «վարտիքիս լուացող-չէքին փոխարէն է» ըսաւ ու բաճկոնիս ծոցը բան մը թխմեց:

Մնաս բարովին ու դուռը գոցուելուն ձայնը միատեղ ականջիս հասածին պէս, աման Պիրիճիկ խաթունը ըսի, շուտ ըրէ վեր ել, իմին քթիս արիւնը մի՛ հոգար, ես ամէն բան պատրաստեմ, աղն ալ ֆիլերին դռանը քովի պտուկին մէջն եմ դրած, վազէ, վազէ, ճանրմ: Ինձ համար հոգ մի՛ տանիր, գիտեմ որ ինծի սիրելուդ համար զարկիր այդ սպտականները:

Ուրիշ հասուած մըն

. . . Պիրիճիկ խաթուն անոնց պատասխան չը տուած քովիկս եկաւ և երկու ականջէս բռնեց, ոտքի վրայ կայնեցուց և ըսաւ:

— Երեսոս նայէ, պատիժ ու փրկուածիւն տուողը ԸՆԾԱՆ (*) է, աշխարհք մէկ ըլլան արեւին ճառագայթները չեն կրնար արգելել, ճշմարտութիւնն ալ արեւին պէս է, և միայն ԸՆԾԱՅԻՆ մէջը կը շողըղայ հոգեւորապէս, քեզի ի՞նչ կ'ըսէ կոր, ան մտիկ ըրէ, անոր ետեւէն գնա, ծով ընկիր ըսէ նէ մի՛ տընտնար, գնա՛, բայց պիտի խեղդուիս եղեր փնաս չունի, հինգ օրէն վերջն ալ լողալ սորվեցնելու կարող ԸՆԾԱՅ մըն է ան այսօրուան օրս, տարակոյս չը կայ, որ դուն ալ կրնաս վերջապէս խաղաղութեամբ ծովեզերքը ելնել, առանց ոտքդ ու թեւէդ շարժելու:

(*) Կրօնական գիրք մըն է, (1856):

ՄՐԱՄԻՏ ԽՕՍԳԵՐ

Իրաւագիտութեան վարժարանի մը մէջ.

— Դասատուն. պարոնայք ձեզ բացատրեցի թէ շատ պարագաներու մէջ մայր մը իր զաւակներուն խնամակալ կրնայ ըլլալ պայմանաւ որ չափահաս ըլլայ. հիմա ըսէք տեսնեմ մեծ մայրս կրնա՞յ խնամակալուհի ըլլալ:

— Աշակերտք. — այո, պարոն.

— Ի՞նչ պայմանաւ.

— Պայմանաւ որ չափահաս լինի.

×

Երկու բարեկամներու միջեւ.

— Ինչո՞վ կը զբաղիս.

— Փաստաբան եմ, է, դո՛ւն:

— Ես բժիշկ եղայ եւ հիմա ալ առաջին յաճախորդիս կ'երթամ կոր:

— Լաւ. միայն թէ՛ քիչ ատենէն հիւանդին ժառանգորդներուն մէջ գծաւորութիւն ծագի նէ ինծի իմաց տուր:

×

— Ի՞նչ է գինետունը.

— Գինեմոլներու փիլիսոփայութեան տաճար:

×

— Ծանձերը ուսկի՞ց կը վախնան:

— Դպրոցի տղոցմէ, եւ գրավաճառներէ:

×

Աղքատը հարուստին ե՞րբ կը նմանի:

— Քունին մէջ երազած ատեն:

Ք Ա Ս Ի Մ Ի

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ՆԱՐԵԿԸ

Ս. Գրիգոր Նարեկացիի այս հոգեշունչ մատեանը, որուն ամբողջութիւնը գրաբար բնագիրէն հասկնալի ու մաքուր աշխարհաբարի մը թարգմանած է Քասիմ, Մեծ Պահքի առթիւ կը յանձնարարուի ամէն Հայ քրիստոնէի որ գիտէ վայելք զգալ հոգեկան հաճոյքներով: Կը ծախուի Մանգումեի Խըմբազրատունը մէկ արծաթ մէճիտ գինով, գաւառներէ փօսթի ծախք չի պահանջուիր. արտասահմանի 4.50 ֆր.:

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ՆԻԻ ԵՈՐԲ.—Տօքթ. Կռէկօրի օրի-
նագիծով մը կը պահանջէ որ բժիշկ-
ներուն արտօնութիւն տրուի առանց
ցաւի մեռցնել բացարձակապէս անբու-
ժելի հիւանդները, որպէս զի պարապ
տեղը շտառապին անոնք: Այս դատին
ամէնէն յերմ շտառագործներէն մէկն է
օրիորդ Հօլ, որ վերջերս արտօնութիւն
խնդրեց իր մայրը մեռցնելու, որով-
հետեւ անբուժելի հիւանդութենէ մը
վարակուած է:

Ծ. Խ.—Կը ցաւիմ քու միամտու-
թեանդ վրայ, ով Եանքիներու աշ-
խարհի Եանքիդ, Տօքթէօն Կռէկօրի:
Բուժելի հիւանդները ի՞նչ ըրած ունիք
որ հիմակ ալ ելեր էք անբուժելիները
մեռցնելու: Իսկ, դո՛ւք, ով ազնուա-
փոյլ օրիորդ Հօլ, փոխանակ ծրագրին
ընդունուելուն սպասելու, ձախաւեր
բժիշկի մը յանձնեցէք ձեր մօր դար-
մանումը և յուսացածէդ շատ աւելի շուտ
անոր գործը կը լմնայ:

ԼՈՆՏՈՆ.—Թերթերը նոր խնդիր
մը կը յուզեն: «Ինչո՞ւ չենք վազեր»
հարցումը օրուան խնդիր դարձած է
հոս: Ամէն մարդ, որ բան մը կը մը-
տածէ, պատասխան մը կը զրկէ որ
անմիջապէս կը հրատարակուի: Ձեր
կարծիքը ի՞նչ է այս մասին:

Ծ. Խ.—Մեր կարծիքը շատ պարզ է:
Թուրուպանի չենք. ահա ասոր հա-
մար չենք վազեր:

ՕՀԻՕ.—Հոս, մօտերս 108 տարե-
կան մարդ մը ամուսնացաւ 104 տա-
րեկան նազելայուք աղջկան մը հետ:

Ծ. Խ.—Կերեւայ թէ իրենց մեզ-
րալուսինը գերեզմանոցին մէջ պիտի
անցունեն: Երջանի՛կ ամուսնի:—

ՂԱԼԱԹԻԱ.—Ուսուցչաց օգնու-
թեան սնտուկի հոգաբարձութիւնը,
որոշեր է 4 ոսկի ամսական սահմանել
կարօտ ուսուցչի մը. ուրիշ ոչ նուազ

կարօտ ուսուցչի մըն ալ 3 ոսկի ամսա-
կան յատկացուցեր է:

Ծ. Խ.—Պաշտօնի վրայ եղող, եւ
օրը 12 ժամ սիրտ ու փոր հատցընող
մեր մնայուն ուսուցիչներէն ալ աղէկ
են եղեր այդ պաշտօնէ քաշուած ու
կարօտ ուսուցիչները, քանի որ 3-4
ոսկի ամսաթոշակ առնող մնայուն ու-
սուցիչները մատի վրայ կը համրուին
այսօր:

ՊԱՅԱՍԶԻՏ.—Տեղւոյս առաջն. Տե-
ղապահ Տ. Էմմանուէլ Վ. Պալեան իր
վիճակին եկեղեց. և կրթ. դժուարու-
թիւնները յայտնելով, կը խնդրէ որ
վերջնական տնօրինութիւն մը ըլլայ,
իր մասին և այլուր պաշտօն մը տրուի
իրեն:

Ծ. Խ.—Այլո՞ւր.—Պոլիս, չէ՞. գե-
ղազուարճ ափունքը միտքը եկած է,
չէ՞:

ԽԱՍԳԻԻԴ.—Տեղւոյս մուկերը որո-
շեցին իրենց ստքերուն մէկմէկ զան-
գակիկ կապել կատուններուն գալուստը
մէկմէկու իմացնելու համար: Բայց,
որովհետեւ այս նախազգուշութիւնը
նախապէս իմացուցած չէին տան մէջ
ընակողներուն, այս վերջինները առաս-
տաղէն զանգակի ձայն առնելով, «ան-
ծանօթ ոգիներ» կը կարծեն և լեղա-
պատառ դուրս կը վազեն:

Ծ. Խ.—Օրաթերթերու մէջ կար-
դացինք այդ զանգակահար մուկին
պատմութիւնը: Չարաճճի դրացուհիի
մը մէկ խաղն է եղեր, ուրիշ մուկերը
փախցնելու համար. և սակայն փոխա-
նակ մուկերը փախցնելու տնեցիները
փախուցեր է:

Կըսուի թէ զանգակահար մուկը օ-
ձիքը ձեռք տուեր է ի մեծ ապշու-
թիւն տնեցի այր ու կնոջ:

ՕՔ ՆՈՔ

ԼՈՒՔ ՆՈՔ

ՈՏԱՆԱԾՈՔ

Հեաֆրախան չէ՞ սա բաց նամակ
 Չոր հրաւարակեց թերթը Սուրհանդակ
 Կարծե նոյնութեամբ գայն մէջ բերել հոս,
 Տեսե՛ք թէ ի՞նչպէս մարդ կիյնայ ի փոս:
 Վահան վարդապետ մեր Տէր Մինասեան
 Գրողն է նամակ առ Դանիէլեան:
 « Դերաշնորհ Տէր Ներսէս վարդապետ
 Որ ե՛ք Իսկիսար ֆարգիչ թեպէս
 Բիւզանդիոնի թերթին մէջ գրե՛ք
 Թէ՛ «կրսէ Թիսու», եւ այս խօսք կրկնե՛ք,
 « Ըզբշնամիս ձեր սրտիս սիրեցե՛ք
 Ասեղեաց ձերոց բարի արարե՛ք »
 Եւ կը յաւելո՛ւք. « մենք սիրած չունինք
 Ոչ հակառակորդ ոչ ալ թշնամիք,
 Այլ նոյն իսկ մեր խիստ մօտ ազգականներ
 Ծանօթ, բարեկամ, ոչ իսկ եղբայրներ »:
 Եւ ի վերջոյ, դո՛ւք առանց խպնելու
 Ձեր ազգակիցներ՝ չեմ գիտեր ինչո՞ւ
 Կանուանե՛ք թէ եզ եւ թէ անասուն,
 Գրելով դարձեալ գրչով մ'աղաղուն
 Թէ՛ «կրսէ Թիսու». « ուսարո՛ք յինքն
 Թէ սրտիս հեզ եմ եւ խնարհ ինձեմ »,
 Եւ կը յաւելո՛ւք « մեր մեջէն շատեր
 Կարծես այս հեզ բառն, եզ եւ հասկըցեր,
 Վարն գիտնո՞ւմ գործեն եզաբար
 Եւ կ'ապրին նոյն իսկ լոկ անասնաբար »:
 Ուրեմն, կրկնէ Վահան վարդապետ,
 « Թերադրուած անշուշտ ձեր անձին անպէտ
 Օրինակէն է, որ չընաշխարհիկ
 Եզակացութեանդ յանգեր ե՛ք հեզիկ »:
 Ըստրագրուած՝ Մարտ երեք թուական
 Եւ Տէր-Մինասեան վարդապետ Վահան:

X

Թերզեան-Մանուրեան չրագրական դաս
 Որ հեաֆրաքեց ամեն հայ անհաս
 Ըսեմ ձեզի թէ, ի՞նչպէս վերջացաւ
 Դաս մը, որ հանեց ոչ նշուազ համբաւ:
 « Անպարար » բառէն ելաւ հօգգապագ
 Որմէ Մանուրեան չրաւ թընաւ հազ
 Բանցի մէկ ոսկի տընաւ ան տուգանք
 Առանց հաշուելու ուրիշ ծախսերն անկ:

X

Կէյլէ Միջագիւղ թեմըն Իզմիշի
 Կրօնափոխութեան շրջուկ կը շրջի,
 Հայ ընտանիքներ թիւով ութսուն հինգ
 Միտում ցոյց կուտան, անշուշտ վաղանցիկ
 Հեռանալ իրենց եկեղեցիէն
 Եւ յարիչ որո՞ւ, իրենք ալ չգիտեն:
 Այս տեղեկութիւն որ սայ թղթակից
 Մանգումէ թերթի մեր պաշտօնակից,
 Ուշադրութիւնը Ս. Առաջնորդին
 Խնդրէ, ինչպէս եւ Պատրիարքարանին:

X

Թողունք Մահեկանն ու Չիլիկիւրեան
 Որ շարունակեն իրենց գործ ու ձայն
 Խօսին ու վիճին՝ բայց, պարկեշտեմ,
 Չուխանդեանէն կամ Եկմաշեանէն,
 Ու մենք դիտենք թէ Բըժիշկեան Արամ
 Ծանօթ երաժիշտն ի՞նչ սայ մեզ պատգամ:
 Պեշկիբաշի մեր Ս. եկեղեցին
 Զիշտ Զատիկ առտուն պիտի երգուին
 Երգեցողութիւնք բազմաձայն կարծեմ
 Որ խառնուող մըն է թերուած դիւ առ դիւ,
 Եռաձայն, երկաձայն քիչ մըն ալ յորդոր
 Աստուած սայ չըլլայ փորձ մը անտվոր:

X

Հեռագիր մը նոր հասած Մարաշէն
 Կիւնացընէ թէ վարդապետ Բարգիւն
 Եղաւ առաջնորդ նոյն այն գաւառին
 Ընտրութեամբն անշուշտ տեղոյն ժողովին:
 Մաղթենք որ ըլլայ հովիւ մը ազնիւ
 Ու գործերովը շահի շատ պատիւ:

X

Նոր թերթն մ'ահա շատ հեաֆրաքի
 Որ տարօրինակ ունի վերնագիր
 Եւ որ Ձեզ յայտնել չէ կարծեմ ունայն
 « Հովանցի մը համար » միմիայն
 Որոշեց ընել « աշխարհի շրջան »
 Մեր « Մանգումէ » հայ թերթն անգուցական:

Արտօնատէր ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Պապը ալի ճատուտի, քիւ 52



BOVININE

ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՍՆՈՒՆԴ

ՓՈԲՐ ՏՂԱՅՈՑ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒԼ

ԵՒ ԾԵՐԵՐՈՒ

Bovinine կը պարունակէ զուտ մանգային մասերն եղան մսին, ուղեղին, ողնուղիւղին և ֆոսֆորէնէրն ոտկրային կազմուածքին, խտացեալ վիճակի մէջ։ Պոլիս նոր բերուած այս անզուգական կազդուորիչ դեղը, գնահատուած համաբաւարար բժիշկներէն. չերմայէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'զգան «ուժասպառութիւն, դաշկութիւն, անախորժութիւն, ստամոքսի խանգարում, ընդհանուր ջրային տկարութիւն, նիհարութիւն, կուրծքի տկարութիւն, անախորժութիւն»։ Ընկերութեան միակ ներկայացուցիչը ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԱՐԻ, Պահճէ-գաբու, Օսմանեան նամակատան ետեւի կողմը։ Կը գտնուի նաև ամէն նշանաւոր գեղարաններու և դեղորէից միջերանոցներու քով։

50—34

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԸԱՆՆԵՐԵԶԵԴԵՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ և Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբան Համալ, Թօփաշեան խան

Սոյն վաճառատունը, որ տարինեղէի վեր իր ուղղութեամբ, ապրանաջ տոկունութեամբ և գիններու ունեցեղի աժանութեամբը շահած է բոլոր իրեն գիմիդ յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ րնախ հագուստներու, կանանց քերթիւններու և տղայոց չիք և դիմացկուն ֆաբրիկաներու ճոխ միջերք մը պատրաստ ունի, որ չերմայէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հագուստի և ուրիշ նմանօրինակ սրիտոյց։

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրշ. է։

Գաւառներէն յանձնարարութիւնը փութով կը կատարուին։

50—28

ՄԱԶԻ ՆԵՐԿԵՐ

Մասնագէտ Արամ Էֆէնտի Սօղանճեանի պատրաստած ջուրը քիմիագէտները տարրալուծած եւ քննած ըլլալով, վկայած են թէ՛ Պիասա-կար նիւթերէ բոլորովին զերծ է։



Յիշեալ ջուրը մաշերը գունաւորելու համար պէտք եղած գիտական յատկութիւնները ունի եւ այս մասին Կայսեր. Բժշկական վարժարանի որոշմամբ ամէն կողմ պէտք եղած հրահանգները տրուած են, ապէ՛ գաւառ Ժէպիտի վեգաիթի Թըպիլիյի միջոցաւ մասնաւոր ազդարարութիւններ եղած են։

Այս գեղեցիկ եւ առողջապահիկ գիւտը շատ մը մարդոց կողմէ կեղծուած է, որոնք ապաւորուելի ջուրեր պատրաստելով իրեն տեղական ապրանք կը ծախեն։

Եթէ կուզէք բոլորովին մաքուր եւ առողջապահիկ կերպով գունաւորել ձեր մաշերը, զգուշացէ՛ք այս կարգի աղտոտ ու գունաւոր օտար ջուրերէն, եւ աւելի մաքուրը ու զուտը ստանալու համար դիմեցէ՛ք Մահմուտ բաշա ճատտէսի, Յիշեալ Արամ Էֆ. Սօղանճեանի 121 թիւ անուշահոտութեանց վաճառատունը, ուր պիտի գտնէք մաքուր ջուր ձեր մաշերուն գունաւորման համար։

Կը յանձնարարուի մասնաւորապէս ուշադրութիւն ընել Ա. Սօղանճեան ստորագրութեան։

Կը յանձնարարուի մասնաւորապէս ուշադրութիւն ընել Ա. Սօղանճեան ստորագրութեան։

Հ Է Ր Ճ Ա Յ Ի

Ա.ՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ շղթայներու, գրպանի պատի և քօնսօյի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստունի արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուններ, նաև ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօափիէներ, ամերիկեան կօշիկներ : Ունի նաև կահկարասի, ձեղունի լամբարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական զորգեր, զետնի մուշամպաներ, կրամօֆօններ ու պիսիկէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով :

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ շահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տոկունութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար :

Ա. Պ Ա Ռ Ի Կ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար շաքաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայթայթել :

Վաճառատունս հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉՈՑ ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն դժուարահաճ յաճախորդները :

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

50-24

Շաքաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են :

Ե. Տ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆԻ

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ՇԱՐԱԿԱՆՆԵՐԸ

Հայ եկեղեցւոյ Շարականներուն վսեմութիւնը բացայայտ է արդէն, Մեծ Պահքի այս օրերուն մանաւանդ՝ կարելի չէ երեւակայել քրիստոնեայ մը որ փափաք չզգայ, հոգեկան կարօտը յագեցնելու, Արեւադալներով և ուրիշ Շարականներու ընթերցուածներով :

Երուանդ էֆ. Տ. Անդրէասեան խնամուած աշխարհաբարի մը վերածած է Շարականները, երկու հատորի մէջ ամփոփելով իր աշխատասիրութիւնը : Ա. հատորին գինն է 2¹/₂, Բ. հատորին գինը 5, երկու հատորը մէկէն 7¹/₂ զրդ. արտասահմանի համար 2 Ֆր. գաւառներու համար 9 զրդ. : Կը ծախուի Մոնզումի խմբագրատունը :